ՆԱԽԱԳԻԾ

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի նոյեմբերի 12-ի №0346/20-И11 գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ Երևան քաղաքի Իսակովի և Ֆ.Վերֆելի փողոցների խաչմերուկից մինչև Լուսինյանց 5 հատվածում վարձակալության հիմունքներով «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ) խողովակաշար տրամադրել չեն կարող, քանի որ Ընկերությունն այդ հատվածում ունի գործող խողովակաշարի սահմանափակ քանակություն և առաջիկա 3 տարիների ընթացքում նախատեսվում է անցկացնել օպտիկամանրաթելային մալուխ,

բ) ի պատասխան Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի նոյեմբերի 18-ի №ՍՇ/34.2-Մ2-10/4662-2020 գրության՝ Ընկերության 2020 թվականի նոյեմբերի 23-ի №00360/20-И1 գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունն «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի 2020 թվականի հոկտեմբերի 20-ի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումին պատասխանել և տեխնիկական պայմաններ է տրամադրել 2020 թվականի նոյեմբերի 3-ին, ավելին՝ հետագայում «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի նշված դիմումը մերժել է 2020 թվականի նոյեմբերի 12-ի №0346/20-И11 գրությամբ,

գ) Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետը, որի համաձայն՝ գերիշխող օպերատորը, դիմումն

ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ուսումնասիրել այն և լրացուցիչ շինարարական աշխատանքներ չպահանջվելու դեպքում օպերատորին տրամադրել տեխնիկական պայմաններ, կամ դիմումը մերժելու մտադրության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել օպերատորին և Հանձնաժողովին,

դ) որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի դեկտեմբերի 4-ից վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ Կանոնների 10-րդ կետի պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի դեկտեմբերի 10-ին Հանձնաժողով ներկայացված №00378/20-И11 գրությամբ հայտնել է դիրքորոշում այն մասին, որ «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի աշխատակիցը հոկտեմբերի 20-ի աշխատանքային օրվա ավարտին Ընկերության միջօպերատորական համագործակցության բաժնի աշխատակցին է ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություն՝ Երևան քաղաքի Իսակովի և Ֆ.Վերֆելի փողոցների խաչմերուկից մինչև Լուսինյանց 5 հատվածում խողովակաշարի վարձակալության տեխնիկական պայման տրամադրելու մասին: Նշված հաղորդագրությամբ «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ն ի սկզբանե չի ապահովել Կանոններով նախատեսված դիմումի ձևաչափը, որը ենթադրում է տնօրենի կողմից ստորագրված և կնիքով հաստատված տարբերակ, ինչպես եղել է այլ դիմումների դեպքում, չի ներկայացվել Կանոնների 6-րդ կետով սահմանված Ընկերության բանկային հաշվեհամարին վճարված տեխնիկական պայմանների առկայության ստուգման ծառայության համար վճարի անդորրագրի և էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիայի պատճենները: Օպերատորի դիմումը ենթակա է քննարկման միայն ամբողջական փաթեթի առկայության դեպքում՝ Կանոններով դրա ուսումնասիրման համար սահմանված 7 աշխատանքային օրվա ժամկետի պահպանմամբ և ոչ պատշաճ ներկայացված դիմումն, ըստ էության, առոչինչ էր և ընթացք պետք է չունենար, սակայն Ընկերության աշխատակիցները դիմումին ընթացք են տվել, արդյունքում՝ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ին տեխնիկական պայմանի նախնական նախագիծը սկզբնական փուլում տրվել է նոյեմբերի 3-ին, երկու աշխատանքային օր ուշացումով և առաջացրել է Կանոններով սահմանված ժամկետի «ենթադրյալ» խախտում: Միևնույն ժամանակ, Ընկերությունը, հայտնել է, որ հաշվի առնելով, «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի կողմից Կանոնների 9-րդ կետի պահանջները, մասնավորապես՝ տեխնիկական պայմանի ստուգման ծառայության վճարի անդորրագրի ներկայացումը չպահպանելու հանգամանքը, որի պայմաններում Ընկերությունն իրավասու էր չմատուցել տեխնիկական պայմանի ստուգման ծառայություն, հետևաբար և չէր խախտվի այդպիսին տրամադրելու կամ մերժելու ժամկետը, Ընկերության կողմից դիմումին ընթացք տալը, ինչը ենթադրում է բովանդակային առումով Ընկերության կողմից Կանոններով

սահմանված պարտավորությունների կատարում, Հանձնաժողովին ներկայացված «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման հիմնավորումների ընդունումը և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №444Ա որոշումը, Կանոններով սահմանված ժամկետում «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի նշված դիմումին արձագանքման տեղ գտած փոքր-ինչ ուշացման փաստին նպաստած գործոնների ներկայացումը, ինչպես նաև այն, որ վարչական վարույթի առարկա (դիմումը) հանդիսացած փաստով պատշաճ միջոցներ են ձեռնարկվում հետագայում նման խախտումները կանխելու ուղղությամբ՝ Ընկերությունը խնդրել է, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կարճել Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

զ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 10-րդ կետի պահանջները, մասնավորապես՝ «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի 2020 թվականի հոկտեմբերի 20-ի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումին պատասխանել և տեխնիկական պայմաններ է տրամադրել 2020 թվականի նոյեմբերի 3-ին (10-րդ աշխատանքային օրը), հետագայում «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի նշված դիմումը մերժել է 2020 թվականի նոյեմբերի 12-ին (17-րդ աշխատանքային օրը), մինչդեռ տեխնիկական պայմաններ տրամադրելու կամ դիմումը մերժելու համար Կանոնների 10-րդ կետով նախատեսված է 7 աշխատանքային օրվա ժամկետ: Ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած դիտարկումներին՝ ապա պետք է նշել, որ, ըստ էության, «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի կողմից Ընկերությանը ներկայացվել է հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմում, որին Ընկերությունը ընթացք է տվել, հետևաբար, դիմումի բավարարումը կամ մերժումը պետք է իրականացվեր Կանոններով սահմանված ժամկետում: Ընդ որում, Կանոնների պահանջները ենթադրում են ոչ թե դրանց մասնակի, այլ ամբողջական կատարում, որն Ընկերության կողմից չի իրականացվել, ավելին՝ Ընկերությունն իր 2020 թվականի դեկտեմբերի 10-ի №00378/20-И11 գրությամբ ընդունել է Կանոնների 10-րդ կետի պահանջների խախտումը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №444Ա որոշումը վերաբերում է Ընկերության կողմից «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման հիմքերին և նշված որոշման կայացումը որևէ կերպ չի ենթադրում, որ Ընկերության կողմից պահպանվել են դիմումի մերժման Կանոններով սահմանված ընթացակարգային պահանջները, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, 63-րդ հոդվածի 4-րդ մասը և Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 10-րդ կետը խախտելու համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն (1 000 000) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում №900005242319 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով սահմանված տուգանքը:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու իր որոշումը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2020թ.